ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2026թ. թիվ 510-Ա

Ն.ԲԱՐԻԿՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1) կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 9-ի՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 795 արձանագրությունը և հաշվի առնելով Ն.Բարիկյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նաիրա Լյովայի Բարիկյանին 2026 թվականի հուլիսի 17-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պաբլո Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ն.Բարիկյանի աշխատավարձը սահմանել համաձայն պայմանագրի:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-16 12:26:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 16
ք.Վանաձոր